

կիւրեղն և քըւերքն իմ զՀեղինեան և զԼսոնին»։ (Թօյի. Յոց. էջ 64)։ Նոյնին գործը կը կարծուի նաև նկարագարդ վարագոյր մը որ գտնուած է Արտագու Ս. Թագէոս առաքեալի վանքին մէջ. յիշատակագրութիւնն է հետեւեալը. «Յիշատակ է վարաքուր: Փոլատի որդի Պապիկ: Ծնողին եւ եղպար վարդան եւ Խաչատուրին: Եւ ծնող Ղարիպին: Ի գուռն Թաթէոսի առաքելին: Յիշատակ օրհնեալ եղիցի թվին ՌՃԼԸ (1689): Իսկ նկարներու տակի գրութիւնն է հետեւեալը. « Այս է Ակոբ Առաքելոյ գլխադիր: Բանտն այս է: Պարտէզն այս է: Այս Արութիւն է: Ես մահտեսի Ըգնատիրոս Եւզոկիացի: Այս պատանատեղ է: Այս գողգոթայ է», (Արարս 1895, էջ 266): Կը թուի թէ մահտ. Եւզոկիացի Իգնատիրոս այս պատկերը նկարած է Երուսաղէմի մէջ և յիշատակարանիս մէջ յիշուած անձերուն ձեռքով տարուած է Արտագ, Թագէոս Առաքեալին վանքը:

Իգնատիրոս Եւզոկիացի Ս. Յակոբին յիշատակ թողած է ՌՃԽԶ և ՌՃԽԸ (= 1697 և 1699) թուին ոսկեթել և մարգարտազարդ երկու եմփորոն եւ իր ապոնոզէ հովուական զաւազանը սա յիշատակարանով. « Ի վայելումն Թոխագցի Իգնատիրոս վրդտ.ին թուին ՌՃԽԷ (= 1698) (Յոց. Պ.)

ԻԳՆԱՏԻՈՍ ՎՐԴ. ՊԷՕՐԷԿՃԵԱՆ, ԵԻԴՈԿԻԱՅԻ.—Մբ. Ծ. 1834ին. Զո. 1862ին. Ժամասաց. (1865-75). Բ. անգամ (1876-1879). ՏՊ. (1875-1876). 1884ին կը վախճանի Երուսաղէմի մէջ. յիշատակ կը թողու երկու բուսմէլիի երկաթուղւոյ արժեթուղթ. (Արձնգր. ՏՆ. Ժող. 1884):

ԻԳՆԱՏԻՈՍ ՎՐԴ. ՓԱՓԱԶԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ.—Մբ. Ծ. 1853ին Զո. 1889ին. ՏՀ. 1893ին. Բ. անգամ ՏՀ. 1905ին. Ժամօրհնող եւ անգամ ՏՆ. Ժողովի (1922 — 1925). կը վախճանի 1925 Յուլիս 24 ին:

ԻԳՆԱՏԻՈՍ (մհս.) ՔՀ. ԶԱՂԱԴԵԱՆՅ, ԶՈՒՂԱՅԵՅԻ.— Ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը 1763 ին, հրատարակած է Նարնկէն քաղուածոյ մը Աղօթարևսոյց խորագրով. որուն ոտանաւոր յիշատակարանին մէջ կը նկարագրէ իր ուղևորած քաղաքները. Հոռվմ. Վեմեսիկ. Լիվոնայ, Միջագեֆ եւ Երուսաղէմ, վերջնոյս համար կը գրէ հետեւեալը.